

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/2

3 փետրվարի 2017թ.

Քննարկվեց «Պարոն» ՍՊԸ գանգատները ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 22.11.2016թ. թիվ 1999/01 որոշման դեմ:

«Պարոն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը հայտնում է, որ բազմիցս գրել է, որ «Պարոն» ՍՊԸ-ն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտում չի կարող ունենալ չվճարված հարկային պարտավորություն, քանի որ ոչ մի ակտի դիմաց չի եղել «Պարոն» ՍՊԸ տնօրենի կամ աշխատողի ստորագրությունը: Ակտերը գրված են անհիմն, կեղծ արձանագրությունով, դրանք անվավեր են:

Գանգատաբերը վեց տարի շարունակ բողոքարկել է ակտի կազմման անօրինական գործընթացի դեմ, բայց պետական մարմիններից ոչ մի պատասխան չի ստացել: Շրջանցվել է իր գրավոր հայտարարությունները, որ տեղի է ունեցել իր և իր խանութի նկատմամբ հետապնդում:

Գանգատաբերը խնդրում է ևս մեկ անգամ ուսումնասիրել այս գործը և տրամադրել ընկերությանը տուգանման հիմքերը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 22.11.2016թ. թիվ 1999/01 որոշման համաձայն. «...16.11.2016թ. «Պարոն» ՍՊԸ-ի տնօրենը պատշաճ ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին, սակայն չի ներկայացրել վարույթին ծանոթանալու համար»:

Այո, սակայն, ինչու որոշման մեջ չի նշվել, որ «Պարոն» ՍՊԸ-ի աշխատակցուհի Ն.Սաֆարյանը վերը նշված ծանուցագրում գրված կարգով, պատշաճ ձևով, եռօրյա ժամկետում, գրավոր առարկություն է ուղարկել նշված ակտերի կապակցությամբ, ինչպես նաև նշել, որ Էդուարդ Սաֆարյանը չի կարող մասնակցել նիստին՝ ինսուլտով անկողնում գամված լինելու պատճառով:

Գանգատաբերը նշում է, որ 81 տարեկան է, իսկ կինը՝ 75 տարեկան, և մինչ օրս աշխատում է իր կողմից ստեղծած աշխատատեղում և ամեն ամիս ժամանակին ՀՀ պետական բյուջե է ուղարկում իր լուման:

Գանգատաբերը նշում է նաև, որ «Պարոն» ՍՊԸ-ն չունի ոչ մի չկատարված հարկային պարտավորություն, նշված ակտերը գրված են անհիմն, կեղծ արձանագրություններով, նրանք անվավեր են, անստորագիր:

Եթե օրենքի կետերը կատարվում են և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդվածներով առաջնորդվելով որոշումներ են կայացվում, ապա ըստ այդ նույն օրենքի 16-րդ հոդվածի, 22.11.2016թ. թիվ 1999/01 որոշման մեջ նշված ակտերը վաղեմության առումով ժամկետանց են:

Գանգատաբերը խնդրում է վերանայել որոշումը, բարձրացնել բոլոր փաստաթղթերը, որոնք հիմնավորում են տուգանքները, որից հետո պարզ կլինի, որ տուգանքները ոչ մի օրինական հիմք չունեն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Պարոն» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

պարզել է, որ համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտերի տվյալների 10.11.2016թ. դրությամբ ընկերության չկատարված պարտավորությունները կազմում են 599.470 դրամ, որից սոցիալական ապահովության վճարի տույժ 5 դրամ, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման համար կիրառված տուգանքներ՝ ընդհանուր գումարով 599.465 դրամ: Նշված տուգանքները կիրառվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ 26.04.2010թ. թիվ 2322416 և 13.10.2011թ. թիվ 1100979 ակտերով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ «Պարոն» ՍՊԸ-ի չկատարված պարտավորությունները գանձելու վերաբերյալ, որի մասին ընկերության տնօրենը 16.11.2016թ. պատշաճ ծանուցվել է:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 22.11.2016թ. ընդունվել է թիվ 1999/01 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) «Պարոն» ՍՊԸ-ից 599.470 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Տվյալ դեպքում «Պարոն» ՍՊԸ-ից 599.470 դրամ պարտավորության գումար գանձելու մասին Որոշում կայացվելու համար, ըստ էության, հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ 26.04.2010թ. թիվ 2322416 և 13.10.2011թ. թիվ 1100979 ակտերով կիրառված տուգանքի գումարները («Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետ) սահմանված ժամկետներում չվճարելու հանգամանքը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ 26.04.2010թ. թիվ 2322416 և 13.10.2011թ. թիվ 1100979 ակտերով առաջադրված տուգանքի գումարներն Որոշմամբ գանձման առաջադրվելու վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերագրյալ ակտերով առաջադրված պատասխանատվության միջոցը, այն է՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տուգանքը, չի հանդիսանում հարկային պարտավորություն (հիմք՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դրույթները), հետևապես Որոշմամբ նշված պարտավորության գումարները չէին կարող գանձման առաջադրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանձատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 22.11.2016թ. թիվ 1999/01 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ